

ՎԼԱՍ ԿԱՌՆԻԱՅԻ

ՎԵՆԵՏԿԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ ԺԶ ԴԱՐՈՒՆ

(Տես հատ. ԽԸ յ'էջ 385)

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յանցաշորք

Վերջ պատմած դէպքերնէս քանի մ'օր վերջը, առաւօտ մի մտաւ Պէրբօ Վլասի խանութը՝ բոլորովին զայրացկոտ դէմքով. մինչդեռ խանութին մէջ առանձին կեցեր էր Սիլվեստրա պառւան, զբաղած՝ իբրեւ բարեպաշտուհի մը՝ հոգեւոր գիրք կարդալով։

Պէրբօյի ներս մտած ժամանակ հանած աղմուկէն, կեղծաւոր պառւան վեր ցատաւ քեց այլայլած և ըստաւ։

— Վախցուցիր զիս. ի՞նչ ունիս, Պէրբօ. տխուր կ'երևաս ինձի այ առաւօտ։

— Է՛հ, ի՞նչ կ'ուզես որ չլինիմ. եթէ գիտնայիր, Սիլվեստրա տիկին, իմ գլխուս եկածը։

— Ի՞նչ հանդիպեցաւ քեզի։

— Ո՛հ ոչինչ բաներ. . . Զեն գիտեր։

— Վերջապէս, ի՞նչ լուր ունիս, հարցուց պառւան. կասկածելով մի գուցէ իւր անձին նկատմամբ բան մի լսուած լինի։

— Լսած չեմ, պատասխանեց կինն՝ աւելի ևս հետաքրքրուելով. ուստի ինչ եղաւ։

— Ուստի այն եղաւ, որ երկու օր վերջը, հազիւ թէ քիչ մը լաւի դարձեր էր, իրեն նստիրաւ և անզուրկ գատաւորներն՝ չքստմեցան զինքը տանջանաց մատնելու։

— Է՛հ, հառաչեց անզգամ գազանն, զարհուրանաց դող մը զգալով, և չյաջողեւով զայն պարտըկել։

— Ա՛յ, Սիլվեստրա տիկին, տանջեր են այն խեղճ անմեղը. և կ'ըսեն թէ այն չարչարանաց և ցաւոց սաստկութեան մէջ Վիկտորինէ ինքզինքն յանցաւոր խոստովանած լինի՝ ինչ եղբրան համար որ բանտ տարուեցաւ։

— Ի՞նչ, կատակ կ'ընես, վրայ բերաւ կեղծ զարմանքով Սիլվեստրա. մինչդեռ սիրտը ուրախութենէն կը ճիւղար՝ տեսնելով որ ամէն՝ բան իւր անզգամ փափաքանաց համեմատ կը կատարուէր։

— Երանի՛ թէ կատակ լինէր ըսածս: Հաւատաւ որ ոչ խնտալու և ոչ ալ սուտ խօսելու կամք ունիմ: Եւ փաստաբանէ՛ մ'իմացայ՝ զոր և կոնտողայով՝ Պալատը տարի:

— Խեղճ Վիկտորինէ, կրկնեց պառաւն. զգեստին ծայրով արցունք մի սրբել ձեացնելով, որոյ և ոչ հետքն անգամ արտեւանանցը վրայ նշմարուած էր:

— Հիմկու հիմա, շարունակեց Պէքքօ, խռհեմութիւնն կը պահանջէ որ այս ամէն մէջտեղ քալած լուրերը ծածկենք նորա ամուսնէն: Վայ թէ որ լա՛ն. կրնայ անխոհեմ գործ մ'ընել: Քիչ առաջ զինքը թողուցի բարեկամիս Թիթա Քարալունկայի և ուրիշ երկու ծանօթներու քով, որոց հետ որոշեր ենք զինքը հոս տեղ բերելու, միտքը զբաղեցընելու համար: Տեսնէիր թէ ինչպէս տխուր ու մեղամաղձոտ է. խեղճը, իրաւցընէ սիրտս կը կեղեքէ: Ուստի հինգ հոգույ համար վերը պատրաստէ. դուն ինքն պատրաստէ: Բայց լաւ ոչ դիր որ երբ ժողովինք՝ և ոչ բառ մը բերնէդ փախցնենս այս բաներուն վրայօք: դիտմամբ առաւելոց եկայ որ իմաց տամ թէ ինչ կերպով պէտք է վարուիս: Ուստի «կուածծէթթօ» մը և զբանչելի աղած երչիկ մը պատրաստէ մեզի: Միով բանիւ՝ ինչ որ կ'ուզես, բայց միայն շմոռնաս որ բերնիդ դուռը կղպելու ես:

— Վստահ եղիր, պատասխանեց Սիլվեստրա, որ և ոչ բերանս կը բանամ: Ո՛ր ժամօն պիտի հրամէք:

— Կէս ժամէ մը, կամ շատ ուշ՝ մէկ ժամէն: Կ'աճապարեմ Դքսին Պալատն երթալու, յետոյ շուտով կու գանք:

— Շատ լաւ, գնա. ամէն բան 'ի դարձիդ պատրաստ պիտի գտնես:

Հաղիթ թէ մեկնած էր Պէքքօ, և Սիլվեստրա պառաւն յանձնարարուած նախաւահող պատրաստուելու հետ էր, և ահա ներս մտաւ Վլաս ինքրիմէն գուրս ելած. և յետ չորս կողմը շրջահայեաց ականարկ մը տալու, ըսաւ.

— Լսեցիր, Սիլվեստրա, քաղաքին մէջ տարածուած լուրն:

— Ի՛նչ լուր:

— Այն՝ թէ Վիկտորինէ խոստովանած է, ըսաւ Վլաս սարսափանաց դող մի զգալով:

— Այո՛, քանի մը վայրկեան առաջ Պէքքօ նաւավարն ըսաւ ինծի. բայց իրաւցընէ ճշմարիտ է:

— Զմարտին ճշմարիտը, պատասխանեց Վլաս. Հուսատարիմ մարդէ իմացայ ես զայն. և այսպէս ուրեմն այն եղկելին վաղը պիտի գլխատուի՛:

— Ի՛նչ կայ որ, ասոր համար արդեօք կ'այլալլիմ գուն. պատասխանեց տալն, սատանայական ծիծաղով մի. — Հաւու սիրտ ունեցող էրիկ մարդ:

— Բայց լե՛ս գիտեր, կրկնեց Վլաս՝ ակամայ դող ելած, չե՛ս գիտեր որ մենք միայն յանցաւոր ենք այն եղբրանց՝ որոց համար այն անմեղը զլխապարտութեան պատիժը պիտի կրէ:

— Բայց ցած խօսէ, վախկոտ ծեր: Սեն գիտեր որ լաւագոյն է որ իրեն զուլնն զլխահատութեան գործիքին տակ մնայ քան թէ մերինն: Սեն գիտեր որ եթէ հիմա բառ մը բերնէդ փախցընես՝ կորսուած ենք: Երանի՛ թէ լեզուդ չորնար՝ որ չկարեւնայիր անխելքութիւն մ'ընել: Ողորմելի՛ մարդ: Մարդկային սրտի լաբիւրինդոսին մէջ միայն բերնէն կարելի է ներս մտնել և ելլել. ուստի գոց պահէ զայն՝ եթէ կ'ուզես որ մեր գործերը լի յաղողութեամբ առաջ երթան:

— Դուն լաւ կը խօսիս. բայց սրտիս վրայ ծանրաբեռնեալ խայթերը շատ շատ են, Սիլվեստրա. և տեսնել մանաւանդ անմեղ մի՛ որ իմ պատճառաւ պիտի գա-

տապարտուի, կ'երդնում որ անտանելի բեռ մ'է ինծի, և խելքս զլիւն տանելու չափ սարսափ կ'ազդէ ինծի:

Այս խօսքերուս վրայ պառաւն ուսերը թօթուեց, և ըսաւ միայն.

— Արդէն միտ ողորմելի և անխելք մէկն եղած ես:

Բայց ծերն իրաց այս վիճակին մէջ շուտով չէր հանդարտեր. ուստի ծոցեցաւ և իւր տալին ականջէն ցած ձայնով հարցուց.

— Մի գուցէ մէկը տեսած լինի դեռ շէլթրուտի տղան գողցած ժամանակդ:

— Եւ ոչ իսկ սատանան գիտ կրնար ճանչել. երեսոս դիմակ դրեր էի, և երկայն սև քօղ մը զիս ամբողջ ծածկեր էր: Թող որ գիշեր ալ էր, և ապահովութեան համար սև զգեստ հագած էի և նոյն գունով ալ վերարկուս մը:

— Իսկ երբ Վիկտորինէի աղան յափտակեցիր:

— 'Իե՛ս աղէկ, ճամբան մարդ չկար: Հագիւ թէ դայեակը աղան զետեղեց Անդրն մէջ՝ մեկնեցաւ: Ես զինքը առի, և փայլակի նման արագութեամբ փախայ: Բայց հիմա մէկդի թող այս մտածութիւններդ, այս քու աղայական վախերդ, աղէկ «կուածծէթթօ» մը պատրաստէ, մինչդեռ ես վերը սեղանը շտկելու կ'երթամ:

— Ո՛վ կու գայ նախաճաշելու, հարցուց Վլաս, մինչդեռ վառարանին մէջ կրակը արծարծելու հետէր, որոյ վրայ փռքիկ սան մը կը պղպղար:

— Պէ՛քօ, նորա ազգականն թիթա, Գէորգ, և իրենց երկու բարեկամներ, պատասխանեց Սիլվեստրա:

— Գէորգ ալ, զարմանքով կանչեց Վլաս:

— Ի՞նչ, կը վախճն իրմէն:

— Զինքը տեսնելս՝ սրտիս զգացած տազնապար կը կրկնապատկէ, մտածելով իւր անմեղ կնոջ դատապարտութիւնն:

— Նայէ Վլաս որ այդ տղայութիւններդ քեզի շատ սուղի կրնան նստիլ. պատասխանեց տալն՝ սանդուղներէն վեր ելնելով պատառաքաղներն և ճերմակեղէնները տանելով, նախաճաշին պատրաստութիւն տեսնելու համար:

— Զեմ գիտեր, ըսաւ ինքիւրեն Վլաս՝ մինակ մնալով. բայց նախազգացումն ունիմ որ դժբախտութիւն մը պիտի հասնի վրաս:

Այսպէս ըսելով՝ սկսաւ եփել «կուածծէթթօն», վեր վար ընելով խառնիչով սաւնին մէջ եփուած միսերը, որոց երկու երրորդ մասն իրմէն սպաննուած մարդկանց և աղայոց կը վերաբերէին: